



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՅ

ԺԳ. ՏԱՐԻ. ԹԻԻ Ծ.

1855

ՄԱՐՏԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Քիչ խօսեք . Աղէկ մտածեք . Գաղտնիքի պահէ : (Տես երես 17)

Գաղտնիքի պահէ . Ընուծիւնը շատ իմաստութեամբ մարդուս միտքը գոց տեղ պահէր է , որով անոր մտածութիւնները աներեւոյթ ու անյայտ մնան ուրիշներէն՝ մինչև որ արտաքին նշանով մը չուզենայ մարդ յայտնել . որով կ'իմացնէ՝ թէ ամէն մտածութիւն կամ խորհուրդ պէտք չէ յայտնուի , այլ կայ՝ որ ատենին յայտնուի , և կայ ալ՝ որ բնաւ չյայտնուի ու գաղտնի մնայ : Ուստի երբոր մէկը իր ամէն մտքի եղածները կը յայտնէ և իր պահծու գաղտնիքն ալ դուրս կու տայ , ըսել է որ բնաւ կարողութիւն չունի բան մը

պահելու : Ապարապետ մը երբոր զօրքը առած արշաւանք մը կ'ընէր , իր զօրավարներէն աւելի հետաքրքիրը հարցուց իրեն . “ Ո՛ր կ'երթանք , ի՞նչ պիտի ընենք ” . որուն պատասխան տուաւ սպարապետը՝ հարցընելով . “ Թէ որ այդ գիտնաս , ուրիշի պիտի ըսես ” . — “ Ըէ ” , ըսաւ զօրավարը . — “ Հատ աղէկ , պատասխանեց սպարապետը . գիտնաս որ Լստուած ինձի ալ այդ կարողութիւնը տուեր է իմ գաղտնիքս պահելու ” :

Այլոքն ոմանք թէ արք աւելի հաւատարիմ են ուրիշի գաղտնիքը պահելու ,

խակ կանայք՝ իրենցը . միացուր այս երկուքին ունեցած կատարելութիւնը՝ առանց իրենց ունեցած պակասութեանը , նմանէ ու մի նմանիր երկուքին ալ , և կ'ըլլաս կատարեալ : Պահէ ամենայն հաւատարմութեամբ ուրիշին գաղտնիքը . պահէ քուկդ ալ նոյնպէս ամենայն խնամքով , մանաւանդ անանկ գործքի մը մէջ , որուն յայտնուիլը մեծ հետեւանքներ կրնայ ունենալ , և թէ ուրիշ մեծ փնտա մ'ալ չըլլայ՝ գործքդ կրնայ ետեւ մնալ , թէ որ բոլորովին ալ չաւրուի : Կառավարութեան և մեծամեծ գործքերու մէջ՝ գաղտնութիւնը անոնց հոգին է , կ'ըսէր ճարտար քաղաքագէտ մը : Ուրիշներուն կառավար եղողը՝ աշխարհքիս գերագոյն կառավարչին նմանելու է , որ բոլոր տիեզերքը այնպիսի գաղտնի գորութեամբ մը կը կառավարէ , զորն որ բաց իրմէ ոչ ոք այլ կարող է գիտնալ : Եւ ճարտարութիւնը այն է՝ որ մարդ ուրիշի միտքն ու խորհուրդը իմանայ և իրենը չյայտնէ : Կարողոս և Վաղղիոյ թագաւորը այնպէս համոզուած էր այս բանիս , ու այնչափ սաստիկ կը պահէր իր գաղտնիքը , որ օր մը երբոր իր մտերիմներէն մէկը հարցուց իրեն թէ վաղը ինչ պիտի ընէ , պատասխան տուաւ . « Եթէ գիտնամ որ հագած շապիկս իմացեր է իմ գաղտնիքս , կը հանեմ մէկէն կրակը կը ձգեմ » :

Սարգուս սրտին մէջը պահածը դուրս ելելէ չկրնար . իսկ ուրիշի յայտնածը՝ ծածուկ մնալ չկրնար . և երբոր յայտնելու հարկ մը չկայ , յայտնելը բանը վտանգի մէջ ձգել է , որ միշտ անխոհեմութիւն է :

Վաղտնիք մը որ պահողին սրտին խայթ մըն է , անոր յայտնուիլը մօտ է . և ով որ զայն պահելու չափ ուժ չունի՝ իմաստութենէ շատ հեռու է : Եւ անխելութիւն է գաղտնիքդ յայտնել անոնց , որ իրենցը քեզմէ կը պահեն : « Իմէն մարդու քու սիրտդ մի բանար , կ'ըսէ իմաստունը , որ չըլլայ թէ որուն որ կը հաւատաս՝ սուտ բարեկամ ըլլայ և ծաղը ընէ զքեզ » : Եւ շատ հեղու չա

փազանց վստահութեամբ մը՝ չփորձած մարդիկներնուս կը բանանք սրտերնիս և բոլոր մեր գաղտնիքը կը յայտնենք . այս տկարութիւնը մեր անփորձ կամ նեղութեան մէջ ըլլալէն առաջ կու գայ : Եւ ինչպէս մէջ՝ մարդս թեթեւութիւն մը կը փնտռէ . և անփորձ ըլլալով՝ չտեսներ իր անզգուշութենէն առաջ գալու փնտսները : Եւ ինչպէս մէջ գտնուողները և պատանիք՝ գրեթէ միշտ անզգոյշ կ'ըլլան :

Եւ շատ խօսքներն ալ ունին այս մեծ պակասութիւնը՝ որ գաղտնիք պահել չեն կրնար . ամէն բան՝ ինչ որ ներսերնին կայ , իրենց շատխօսութեանը նիւթ կ'ըլլայ , և շատ հեղու այն բաներն ալ կը յայտնեն , զոր իրենց շահուն համար գոնէ պէտք էր որ պահէին . և երբոր իրենք իրենց գաղտնիքը պահել չեն գիտեր , ինչ կը զարմանանք կամ ինչու դժուարնիս կու գայ՝ երբ մերը չպահեն : Եւ ինչպէս՝ որ անզգոյշ և անխոհեմ մարդը երբ ճանչցուի , որ շատ շուտ ալ կ'ըլլայ , անունը կ'ելլէ , կ'անարգուի և ինքն իր լեզուով ուրիշի ձեռքը տուած զէնքովը կը վիրաւորուի ու ամօթէն ձայն ալ չկրնար հանել . և շատ բաղդաւոր է՝ թէ որ իր անզգուշութիւնը մահաբեր հարուած մ'ալ չըներ իրեն : Եւ ինչպէս՝ որ իմաստուն գոյնը Սողոմոն կ'ըսէ . « Բոլոր գործողք վրայօք բարեկամացդ հետ միայն խօսէ , և օտարի քու գաղտնիքդ բնաւ մի յայտնէր , որ չըլլայ թէ ծաղը ըլլաս ու շարունակ ամբնաս անկէջ » : Եւ անիքանի հեղ արդեօք զղջացեր ենք լուսել չկրնալնուս համար :

Եւ ինչպէս՝ որ մարդ առանց ուզելու իր գաղտնիքը կը յայտնէ . մի վստահանար վրադ և միշտ արթուն կեցիր . շատ հեղու շարժուածք մը , նայուածք մը , բառ մը , և մինչև լուսութիւն մ'ալ բաւական կ'ըլլան յայտնելու քու գաղտնիքդ . այնպէս պէտք է լռես , որ լուսութիւնդ ալ չիմացուի և կասկածի չերթըցուի որ բան կը պահես . գաղտնիքն ալ գանձի մը կը նմանի , որուն պահուած ըլլալն որ իմացուի՝ կէս յայտնուած է :

Շատ հեղու վտանգաւոր է նաև գաղտնեացդ մէկ մասը ըսել՝ մէկալը պահելը . կէս վտահալութիւն մը միշտ փնասակար է . քիչ հեղ կը հանդիպի այնպիսի հարկ մը, որ գաղտնեացդ բոլորն ալ ըսել կամ բոլորն ալ պահել պէտք չըլլայ : Զափէն աւելի յայտնած կ'ըլլաս՝ երբոր մէկ մասը միայն կը պահես . ըսածէդ՝ շատ հեղու չըսածդ ալ կ'իմացուի կամ կը կասկածուի : Ուրիշ կողմանէ ալ՝ այն առջի վտահալութիւնը, որով գաղտնեացդ մէկ մասը յայտնեցիր, իրաւունք մը կու տաս աւելին ալ պահանջելու քեզմէ, զորն որ չես կրնար կամ չես համարձակիր չըսելու : Երբոր իմացուի կէս վտահալութիւն ունենալդ, օգուտ մը չունենալէդ զատ՝ առանց իմանալու այնպէս մը կը բռնուիս, որ հարկ կ'ըլլայ բոլոր գաղտնիքդ բանալ՝ որպէս զի առջի ըրած անգգու լութեանդ փնասը չքաշես :

Երբոր կ'ուզես բանալ ուրիշի քու գաղտնիքդ, նայէ որ որչափ կարելի է՝ անոր հաւատարմութեանը մէկ գրաւն ունենաս ձեռքդ . այնպէս որ իր շահն ալ ստիպէ զինքը քու գաղտնիքդ պահելու, և որչափ որ դու իրմէ կը վախնաս՝ որ յանկարծ քեզ չմտնէ, նոյնչափ ալ ինքը քեզմէ վախնայ :

Խելացի մարդը պէտք է, կ'ըսեն, շատ զգուշանայ՝ չյայտնել իր գաղտնիքը իրեք տեսակ մարդկանց . շատգըրուցին, տղու, և կնոջ . այսպիսիններուն հաւատարմացած գաղտնիքդ դժուար է որ քովերնին մնայ . իսկ թէ որ մէկ աղաչող մը ըլլայ զիրենք կամ մէկ ստիպող մը որ յայտնեն, բանը լմնցած է, գաղտնիքդ հրապարակները կը զրուցուի ու չկարծած փնասդ կը բերէ գըլխուդ : Սամիսոնի տկարութիւնը թէ քանիի նստեցաւ իրեն՝ գիտեն ամենքը : Եւ յատուկ անուանի հռոմայեցին ալ կ'ըսէր՝ թէ « Իրեք բանի վրայ շատ հեղու զգուշացեր եմ . առանց բան սովորելու որ մը անցընելուս, այն ճամբան որ ցամաքէն ալ կ'ըլլուի՝ ծովով ընելուս, և իմ գաղտնիքս կնոջս յայտնելուս » : Ուրիշ իմաստուն մ'ալ խրատ կու տայ

ըսելով . « Բռնաց մեծ հարկաւորութեան մը չըլլայ որ քու պահճու գաղտնիքդ ընտանեացդ մէկուն յայտնես, մանաւանդ կանանց, որոնք դժուարաւ կը լռեն, դիւրաւ կը տռոտին և շուտ կամ ուշ՝ կը յայտնեն միշտ ըսածդ, որուն յայտնուիլը փնասակար է » :

Բայ ըսելով չենք ուզեր բովանդակ կանանց ազգը վար զարնել . գիտենք որ կան և եղեր են կանանց մէջ ալ շատ խոհեմ և զգուշաւոր անձինք : Ինոնք, որ բոլոր կանանց ազգը բացբերան կը համարին և այս պակասութեանը տէր կ'ուզեն ընել, չեն գիտեր անտարակոյս այն մեծ ու զարմանալի դիպուածը, զոր Լութենացուց պատմութեան մէջ կը կարդանք : Խել մը աթենացիք կը միաբանին ծածուկ ու խօսք կը դնեն մէջերնին՝ ազատելու իրենց քաղաքը բռնաւորի մը լուծէն . ասոնց մէջ կար մէկ կին մ'ալ Լեոնէ անունով, որ Բուլծուհի ըսել է : Ինչպէս կ'ըլլայ՝ որ բռնաւորը կասկածի կ'երթայ, և Լեոնէ կը բռնուի ու տանջանքի կը տրուի որ իր ընկերներն ալ յայտնէ . բայց արիասիրտ կինը քաջութեամբ երկայն ատեն դիմանալով տանջանքներուն՝ երբոր կը տեսնէ որ բռնութիւնը կը տկարանայ, վախնալով որ չըլլայ թէ գաղտնիքը բերնէն փախցընէ՝ ինքն իր լեզուն կը կտրէ : Լութենացիք բռնաւորը վերջապէս կը վճռեն . և կնոջը զարմանալի կտրճութեանը համար՝ իրեն արձան կը կանգնեն առիւծ մը առանց լեզուի, ու պատուաւորանին վրայ կը գրեն . « Բուլծուհի յաղթական սեռին » : Ինչ կանայք կը գտուին առանցմէ աւելի զգուշաւոր և գոցբերան, և ինչ արք՝ թէպէտ հանձարեղներէն ալ որ իրենց անխոհեմ բացբերանութեամբը մարդուս զարմանք կը բերեն :

Չանա գաղտնիքդ պահելու, բայց նայէ որ չըլլայ թէ ծաղրական տղայա մտութեամբ մը պարապ բաներն ալ որ չեն արժեր՝ գաղտնիքի մը պէս պահես : Ինչպէս կը գտուին երբեմն մարդիկ, որ իրենց տարիքն ալ գաղտնիքի մը պէս կը ջանան պահել անոնցմէ ևս, որ գի-

տեն կամ կրնան գիտնալ : Մայիսի մէկ խաթուն մը երբոր ցաւելով մը կ'ըսէր օր մը թէ երեսունին կը մօտիկնայ , թէպէտ քառասունն ալ անցեր էր , վարպետորդի գիտցողին մէկը պատասխանեց . « Երեսուն միւթարուիլ , խաթուն , որ երեսունէն միշտ հեռանալու վրայ ես » : Եւ գտուին այնպիսի տղայաւիտ մարդիկ ալ , որ խոհեմ ու բան մը երեւնալու մտքով՝ ոչինչ բաներն ալ կը պահեն . ամէն բան իրենց քով գաղտնիք մըն է . որով ծաղը կ'ըլլան և մարդ մը իրենց բան չհարցընէր :

Սարդ որչափ որ իր գաղտնիքը , նոյնչափ՝ թերեւ աւելի ալ՝ ուրիշներ պահելու պարտական է : Եթէ մէկը վրտահանալով վրադ իր գաղտնիքը կը հաւատայ քեզի՝ ուրախացիր , և այնպէս պահէ զայն՝ ինչպէս կը պահես քու մեծ ու հարկաւոր գաղտնիքդ : Պալատականներէն մէկը հարցուց աւտենօք թագաւորի մը մէկ մտերմին՝ թէ « Ի՞նչ նոր կայ , թագաւորը այսօր քեզի ի՞նչ ըսաւ . որովհետեւ քեզի միայն կը վստահի » . որուն պատասխան տուաւ պալատականը . « Ի՞նչ որ այդ գիտես , ինչո՞ւ ուրեմն ինձի կը հարցընես » :

Իմենէն աւելի զգուշութեւ պահելու գաղտնիքները՝ տերութեւ կամ աշխարհքին կառավարութեւ և կամ մասնաւոր տան մը վերաբերեալ գաղտնիքներն են . անոնց յայտնուիլը հասարակօրէն շատ ծանր հետևանքներ կրնայ ունենալ . և ասոնց վրայօք հարցընելն ալ անոնց , որ այնպիսի գաղտնեաց գիտցող են և աւանդապահ , մեծ անխոհեմութիւն է : Երբեմն ծանօթ է ամենուն Պապիրիոս հռոմայեցի տղուն մօրը հետաքրքրութիւնը՝ իմանալու իր տղէն , որ հօրը հետ հռոմայ խորհրդոյ ատենանը կ'երթար , թէ ի՞նչ որոշմունք եղեր է նոյն օրը խորհրդեանը մէջ . տղան իր տարիքէն վեր խորհրդապահութեամբ մը՝ շինծու բանով հետաքրքիր մօրը ձեռքէն կ'ազատի . իսկ մայրը լսածը իբրեւ ստոյգ հրատարակելով՝ բոլոր հռոմայ տիկնայք կը խռովէ , թէպէտ ետքը կը խայտառակի : Բայց որովհե-

տեւ Պապիրիոսի պէս խելացի և խորհրդապահ տղաք շատ դժուար կը գտնուին , ինչպէս մօրը պէս ալ հետաքրքիրներ խիստ շատ , զգուշալի է այնպիսեաց ծածուկ բան զրուցելը . վասն զի շատ հեղ խօսքերնուն տէր չեն , և առանց իրենց իմանալուն և ուզելուն ալ՝ գաղտնիքը կարծես թէ բերանին կը պատուէ դուրս կ'ելլէ :

Մայիսի հաստատուն հաւատարմութիւն մը ունեցիր , որ աշխարհքիս մէջ բան մը չկարենայ յաղթել քու հաստատութեանդ և ուրիշի վրադ ունեցած վստահութիւնը սուտը հանել : Հաւատարիմ եղիր անոնց , որոնք հաւատարիմ զքեզ սեպեցին . միտքդ ըլլայ միշտ , որ խորհրդապահութիւնը խիստ սրբազան բաներէն մէկն է . և թէ ընկերութեան օրէնքներուն առաջիններէն մէկն ալ այն է՝ լռել և չըսել այն բանը , որ պէտք է ծածուկ մնայ . և թէ այն բանին , որ մեզի իբրեւ աւանդ տրուած է , մենք տէրը չենք՝ որ ուզածնուս պէս տրամադրենք :

Օգուշացիր նոյնպէս բարեկամութեան գաղտնիքը պահելու . « Ով որ , կ'ըսէ իմաստունը , բարեկամին գաղտնիքը կը յայտնէ , անոր ունեցած վրտահոյութիւնը կը կորսնցընէ , և իրեն սրտակից բարեկամ մը չկրնար գտնել » : Իրեն քեզի հաւատացած գաղտնիքը մէյ մ'որ յայտնեցիր՝ ընդունայն կ'աշխատիս նորէն զինքը վաստրկելու . պարապ տեղ ետեւէն մի իյնար , վասն զի քեզմէ շատ հեռու կը գտնես զինքը . որոգայթէ՝ փախած եղջերուի մը պէս կը վազէ կ'երթայ , որովհետեւ սիրտը վիրաւորեցիր : Երեսուն հաւատարմութեւ , ու դարձեալ հետը հաշտուիլ . բայց երբոր այնչափ թշուառ գտնուեցար՝ որ իր գաղտնիքը յայտնես , նորէն իր բարեկամութիւնը վաստրկելու յոյս մի ունենար :

Պաղտնիք չպահող անհաւատարիմ մարդը չկրնար մէկու մը սիրելի ըլլալ ու պատիւ գտնալ . անոնք իսկ , որ բերնէն կ'առնեն գաղտնիքը , առջինը կ'ըլլան

զինքը արհամարհելու : Այս նիւթիս մէջ թեթեւ յանցանքն ալ աններելի կրնայ ըսուիլ . և այնպիսի յանցաւորին պատիժը պէտք է շատ ծանր գայ այն պիսի մը , որ քիչ մը զգացմունք ունի սրտին մէջ . վասն զի մէյ մ'ալ նոյն յանցանքը ընելու առիթ չտրուիր իրեն : Բարեկամիդ գաղտնիքը բերնէդ հանած ատենդ՝ միտքդ դիր որ բարեկամութիւնն ալ, հաւատարմութիւնն ալ, պատիւ և իմաստութիւն և արդարութիւնն ալ մէկտեղ կ'ելեն քեզմէ :

Գոյշ եղիր ուրեմն և արթուն կեցիր միշտ , որ չըլլայ այնպիսի խօսք մը ըսես կամ այնպիսի շարժուածք մը ընես , որով գաղտնիքը կերպով մը իմացուի : Այն որ կը խոստանան գաղտնիքը պահելու , բայց տեղն որ կու գայ՝ երեսնուն վրայ և աչքերնուն մէջ կը կարդաս . բան մը չեն ըսեր և ամէն բան կ'իմացնեն : Այն ալ , որ պարզ կերպով և յայտնի չեն ըսեր , բայց հեռուանց , մօտանց այնպիսի նշաններ կու տան , որ բանը կ'իմացուի . իրենք մըտքերնին կը դնեն՝ որ բան մը չըսին , և սակայն լսողը ամէն բան իմացաւ . կարծես որ կ'ուզեն իմացուի , բայց իրենք ըսող չսեպուին : Եւ ատ հեղուցուցնեն ալ թէ գաղտնիք մը գիտէ՝ զայն իմացնել մըն է . կասկածուած գաղտնիքը գրեթէ իմացուած է :

Այն այնպիսիք ալ , որ գաղտնիք յայտնել չեն սեպեր՝ երբոր իրենց բարեկամին կամ մէկու մը միայն կ'ըսեն . չեն յիշեր ամենեւին թէ իրենց զրուցուելու ատենը՝ այդ թոյլտուութիւնը չտրուեցաւ իրենց , և ոչ այն կը մտածեն՝ որ այդ ճամբով շատ առաջ կրնայ երթալ գաղտնիքը և մինչև հրապարակները ելլել : Այսպիսի գաղտնիք պահողներէն մէկը կու գայ օր մը ծածուկ կը յայտնէ ուրիշի մը՝ իրեն մէկէ մը լըսած ծածուկ մէկ գաղտնիքը , ապրսպըրելով որ ամենեւին մէկու մը չըսէ . « Զոգ մի ըներ , կ'ըսէ լսողը , անանկ աղէկ կը պահեմես ալ ըսածդ՝ ինչպէս որ դուն » :

Գաղտնիք մը դուրս տրուելու այն պիսի վտանգաւոր ժամանակներ կան , որ պէտք է մարդ շատ ջանք ընէ , զգուշանայ , և բոլոր իր խելքն և ուժը թափէ բերանը բռնելու . մանաւանդ երբ որ բարկութիւնը կամ սէրն է որ կը ստիպեն զինքը գիտցածը յայտնելու :

Երբ բարկութենէ շատ աւելի զօրաւոր է և վտանգաւոր . բարկացող մը գաղտնիքը կը յայտնէ . իսկ սիրողի մը բերանը կը թուլնայ . և թէ որ սաստիկ արթնութիւն և զգուշութիւն չընէ մարդ , այնպիսի արբեցութեան մը ժամանակ բոլոր խոհեմութեան օրէնքներն ու կանոնները կը մոռցուին ու բան մը չմնար որ զինքը բռնէ : Սամփսոնը , զորն որ վերը յիշեցինք , այս ճամարտութեան մեծ ու աղետալի օրինակ մըն է :

Այն այնպիսի խեղճեր ալ , որ իրաւցրնէ կարողութիւն չունին գաղտնիք պահելու . բնութիւնը բաւական արթնութիւն մտաց և անդրադարձութիւն տուած չըլլալով իրենց , մէկ կողմէն պահել ուզածնին՝ մէկալ կողմանէ առանց ուզելու ապշութեամբ մը կամ անզգայութեամբ դուրս հանելով , շատ հեղու իրենց հետ զուրիշն ալ խախտ կ'ընեն : Այսպիսեաց խրատ տալ , զգուշացնելն ալ անօգուտ է , վասն զի իրենց ձեռքը չէ . անոնց տեղը պէտք է ուրիշները զգուշանան և իրենց այնպիսի բան մը չյայտնեն , որուն դուրս ելլելը չեն ուզեր :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՌՔ

Ով որ գաղտնիքը կը փնտռէ իմանալ՝ կ'ուզէ ըզքեզ մասնել :

Ի՞նչպէս կրնաս յուսալ որ ուրիշը քու գաղտնիքդ պահէ , երբ դու իրմէ առաջ բացբերան գտնուեցար՝ իրեն յայտնելովդ :

Իմաստունը իրեն հաւտացուած գաղտնիքները կը մոռնայ :

ԳՕԱՍԴ

Բան մը կ'ուզեն որ հռչակուի՝ իբրեւ ծածուկ բան մը մէկու մը ականջէն զուրցէ :

ՀԱՐՈՆ